

Հարցաշար

ԻԴ.01.01 «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտության ասպիրանտուրայի ընդունելության

1. Ընդհանուր երկրաբանություն

- 1.1. Երկրի ձևը և չափերը, ներքին կառուցվածքը, երկրակեղևի կազմությունը
- 1.2. Հասկացություն միներալների և ապարների մասին
- 1.3. Հրային (ներծին և արտածին) ապարներ. նրանց կազմը, ստրուկտուրան, տեքստուրան, ձևավորման պայմանները
- 1.4. Նստվածքային ապարներ. նրանց դասակարգումը, առաջացման պայմանները
- 1.5. Փոխակերպային (մետամորֆային) ապարներ, կազմը, ստրուկտուրան, տեքստուրան
- 1.6. Երկրաժամանակագրություն, երկրաժամանակագրական և շերտագրական սանդղակներ
- 1.7. Ապարի հասակի որոշման մեթոդները: Երկրաբանական առաջացումների բացարձակ և հարաբերական հասակ
- 1.8. Հրաբուխներ: Հրաբխային գոտիներ, զոնաները, նրանց երկրադինամիկական տեսակները
- 1.9. Հրաբխային ապարներ, նրանց կազմը
- 1.10. Հրաբուխների գլխավոր տիպերը
- 1.11. Քամու երկրաբանական գործունեություն: Էոլյան պրոցեսներ
- 1.12. Լճերի և ճահիճների երկրաբանական գործունեությունը
- 1.13. Ինտրուզիվ մագմայականություն
- 1.14. Տեկտոնական շարժումներ, ծալքերը և դրանց մորֆոլոգիական տիպերը
- 1.15. Ֆիզիկական հողմահարում
- 1.16. Քիմիական հողմահարում
- 1.17. Հողմահարման կեղևի առաջացման գործընթացները
- 1.18. Հոսող ջրերի երկրաբանական գործունեությունը: Գետեր, ժամանակավոր հոսքեր
- 1.19. Սառցադաշտեր, դրանց տիպերը, երկրաբանական գործունեությունը
- 1.20. Ծովերի և օվկիանոսների երկրաբանական գործունեությունը: Համաշխարհային օվկիանոսի աղիությունը
- 1.21. Երկրաշարժեր. առաջացման մեխանիզմը, երկրաբանական տարածումը, կանխագուշակումը
- 1.22. Մետամորֆիզմ: Ընդհանուր հասկացություններ: Մետամորֆիզմի տեսակները
- 1.23. Տեխնածին (անտրոպոգեն) ազդեցությունը երկրաբանական միջավայրի վրա (աղտոտում, ռելիեֆ, կլիմայի փոփոխություններ և այլն):

2. ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 2.1 Ջրաերկրաբանական պարամետրերի (չափորոշիչների) բնութագրումները և որոշման մեթոդները
- 2.2 Ստորերկրյա ջրերի ծագման տեսությունները
- 2.3 Երկրագնդի ջրային հաշվեկշիռը և հաշվարկի կիրառումը առանձին ավազանների համար
- 2.4 Ստորերկրյա հիդրոսֆերայի կառուցվածքը
- 2.5 Ստորերկրյա ջրերի դասակարգման հիմքում դրվող գլխավոր սկզբունքները: Ստորերկրյա ջրերի տիպերը ըստ տեղադրման և տարածման պայմանների
- 2.6 Ծծանցման (ֆիլտրացիայի) գծային օրենքի էությունը, գործակցի որոշման մեթոդները
- 2.7 Ջրի քիմիական կազմի արտահայտման իոնային եղանակի առավելությունը
- 2.8 Ստորերկրյա ջրերի հանքավայրերի բնութագրումը, սահմանային պայմանները տարբեր տիպերի (քաղցրահամ, հանքային բուժիչ և այլն) համար
- 2.9 Ջրաերկրաբանության հիմնական բաժինները, նրանց խնդիրները
- 2.10 Ապարներում տարածված ջրերի տեսակները, նրանց բնութագրումները
- 2.11 Ջրաերկրաբանական հանույթի և քարտեզների բովանդակությունը, տեսակները
- 2.12 Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման ջրաերկրաքիմիական մեթոդները
- 2.13 Ջրի դերն ու նշանակությունը բնության մեջ, նրա օգտագործման մասշտաբներն ու ոլորտները
- 2.14 Ստորերկրյա ջրոլորտի առնչությունը հանքառաջացման (հիդրոթերմալ) և սեյսմիկ գործընթացներում
- 2.15 Ստորերկրյա ջրերի ռեժիմը (մոնիտորինգ) , ձևավորման հիմնական գործոնները (տիեզերական, օդերևութաբանական , ջրաբանական, երկրաբանական և այլն)
- 2.16 Կլիմայական և գեոմորֆոլոգիական գործոնների դերը ստորերկրյա ջրերի տարածման և բաշխման գործում
- 2.17 Ջրաերկրաբանական հանույթի խորքայնությունը տարբեր մասշտաբների պարագայում
- 2.18 Երկրաբանական կտրվածքի ջրաերկրաբանական շերտագրման մեկնաբանությունը (իմաստավորումը)
- 2.19 Ստորերկրյա հանքային բուժիչ, թերմալ և արդյունաբերական ջրերի ձևավորման առանձնահատկությունները և տարածման օրինաչափությունները
- 2.20 Ջրաերկրաբանական հորատանցքերի կառուցվածքին առաջադրվող պահանջները
- 2.21 Ստորերկրյա ջրերի արտամղումների նպատակները, տեսակները և կատարման մեթոդները
- 2.22 Ջրապարունակ ապարների հատիկաչափական կազմի, ծակոտկենության և ջրաթափանցելիության կախվածությունը
- 2.23 Ջրի կոշտությունը, տեսակները, կիրառական նշանակությունը

- 2.24 Ջրի ագրեսիվությունը բետոնի, երկաթի նկատմամբ և նրա գնահատումը
- 2.25 Ստորերկրյա ջրերի պաշարների և ռեսուրսների բնութագրումներն ու տեսակները
- 2.26 Ստորերկրյա ջրերի պաշարների (ռեսուրսների) արհեստական լրացման և պահպանության խնդիրները
- 2.27 Փորձային (փորձարկման) արտամոզումների տվյալների մշակումը և հաշվարկային բանաձևերի ընտրությունը

3. ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- 3.1. Ճարտարագիտական երկրաբանությունը որպես երկրաբանական գիտական ուղղություն, նրա խնդիրները
- 3.2. Հատիկաչափական տարրերի ճարտարագիտաերկրաբանական դասակարգումը (Օխտոինի դասակարգումը): Հատիկաչափական ինտեգրալ կորի կառուցումը
- 3.3. Դիսպես գետնահողերի հատիկաչափական դասակարգումը
- 3.4. Դիսպես գետնահողերի հիմնական առանձնահատկությունները
- 3.5. Դիսպես գետնահողերի ջրաֆիզիկական հատկությունները
- 3.6. Ջրերը լեռնային ապարներում, նրանց ազդեցությունը ճարտարագիտա-երկրաբանական հատկությունների վրա
- 3.7. Կավային գետնահողերի պլաստիկություն: Կավային գետնահողերի դասակարգումը ըստ պլաստիկության թվի: Կոնսիստենցիայի ցուցիչ
- 3.8. Կավային գետնահողերի ուռչում և կծկում
- 3.9. Մազական երևույթները դիսպերս գետնահողերում, նրանց ճարտարագիտա-երկրաբանական նշանակությունը
- 3.10. Դիսպես գետնահողերի դինամիկական կայունություն: Տիքստրոպիա, ջրիկացում, պլիվունային երևույթներ
- 3.11. Գետնահողերի սեղմելիություն: Կոմպրեսիոն կորի կառուցում: Կոմպրեսիոն հատկությունների հիմնական առնչությունները (բանաձևերը)
- 3.12. Գետնահողերի սահքի դիմադրություն: Սահքի դիմադրությունը որոշող գործոնները:
- 3.13. Ժայռային և կիսաժայռային ապարների ստատիկ և դինամիկ ջրամրությունը: Կակդում, փափկելիություն, ողողելիություն
- 3.14. Երկրաբանական պրոցեսների և երևույթների Մավարենսկու դասակարգումը
- 3.20. Հողմահարման պրոցեսներ: Հողմահարման կեղևի ճարտարագիտաերկրաբանական մասնատման Գ.Ս.Ջոլտորյովի սխեման: հողմահարման աստիճանի ճարտարագիտա-երկրաբանական գնահատում
- 3.15. Մակերևութային ջրերի գործունեություն, սելավային երևույթներ, նրանց առաջացման պայմանները, պայքարի միջոցառումները
- 3.16. Ստորերկրյա ջրերի գործունեություն: Սուֆոզիոն երևույթներ, նրանց առաջացման պայմանները, պայքարի միջոցառումները
- 3.17. Ստորերկրյա և մակերևութային ջրերի գործունեություն, գերնստման երևույթներ, նրանց առաջացման պայմանները, պայքարի միջոցառումները
- 3.18. Ստորերկրյա և մակերևութային ջրերի գործունեություն, կարստային երևույթներ, նրանց առաջացման պայմանները, պայքարի միջոցառումները
- 3.19. Գրավիտացիոն պրոցեսներ: Սողանքներ: Սողանքների ընդհանուր բնութագիրը: Սողանքների մորֆոլոգիական տարրերի անջատում: Առաջացման պատճառները և պայքարի միջոցառումները

- 3.20. Լանջերի կայունության հաշվարկման մեթոդները
- 3.21. Հեղուկ և գազային օգտակար հանածոների արտամղման հետևանքով առաջ եկած նստումնային երևույթներ
- 3.22. Ստորերկրյա փորվածքներ: Լեռնային ճնշում: Մ.Մ.Պրոտոդյակոնովի բնական հավասարակշռության թաղի տեսություն
- 3.23. Տարածքների ճարտարագիտակրաբանական պայմանների ազդեցությունը սեյսմիկայության վրա: Մանրակրկիտ սեյսմիկ շրջանացում (սեյսմիկ միկրոշրջանացում)